



*Համարը* N 311-Ն

*Տեսակը* Պաշտոնական  
Ինկորպորացիա

*Տիպը* Որոշում  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2015.04.08/20(1109)  
Հոդ.248

*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան

*Ընդունող մարմինը* ՀՀ կառավարություն  
*Ստորագրող մարմինը* ՀՀ վարչապետ  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 09.04.2015

*Ընդունման ամսաթիվը* 19.03.2015  
*Ստորագրման ամսաթիվը* 03.04.2015  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

- +** Կապեր այլ փաստաթղթերի հետ
- +** Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՁԵՎԸ ՈՒ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1361-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 մարտի 2015 թվականի N 311-Ն

ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՁԵՎԸ ՈՒ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1361-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝
  - 1) տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
  - 2) տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի անդամների առաջադրման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.
  - 3) տեսչական մարմինների միասնական հանձնաժողովին ներկայացվող դիմում-բողոքի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.
  - 4) դիմում-բողոք ներկայացրած անձին նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ուղարկվող ծանուցագրի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Հ. Աբրահամյան**

2015 թ. ապրիլի 3  
Երևան

**Հավելված N 1**  
**ՀՀ կառավարության 2015 թվականի**  
**մարտի 19-ի N 311-Ն որոշման**

**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ**

**ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

1. Սույն աշխատակարգը սահմանում է տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեության կարգը:
  2. Հանձնաժողովը ստեղծվում է տեսչական մարմինների և դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության (այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի) դեմ բերված բողոքների քննության և լուծման, ինչպես նաև հարկային և մաքսային մարմինների կամ դրանց ծառայողների գործողությունների կամ անգործության վերաբերյալ վերադաս մարմնի որոշումների դեմ բերված բողոքների քննության և լուծման նպատակով:
  3. Հանձնաժողովի հիմնական գործառույթը հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքների և դրանց վերաբերյալ տեսչական մարմինների ու դրանց ծառայողների գործողության կամ անգործության, նրանց կողմից ընդունված վարչական ակտերի, հարկային և մաքսային վերադաս մարմինների որոշումների քննարկումն ու դրանց վերաբերյալ որոշումների ընդունումն է:
  4. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով՝ ազատ քննարկման պայմաններում: Հանձնաժողովի նիստերն անցկացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի վարչական շենքում:
  5. Հանձնաժողովի անդամները հանձնաժողովի նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ գրավոր (էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով) ծանուցվում են հանձնաժողովի հերթական նիստի օրվա և օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովի անդամներին ծանուցագրի հետ միասին էլեկտրոնային կարգով ուղարկվում են նաև օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող փաստաթղթերի լուսապատճենները:
  6. Հանձնաժողովի անդամը հանձնաժողովի նիստերին մասնակցում է անձամբ:
  7. Հանձնաժողովի աշխատանքը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը կամ վերջինիս նշանակած անձը:
  8. Հանձնաժողովի որոշումները դատական կարգով բողոքարկվելու դեպքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ իրենց համակարգի աշխատողներին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով այլ անձանց Հայաստանի Հանրապետության դատարաններում հանձնաժողովի անունից հանդես գալու նպատակով տալիս են լիազորագրեր:
- (8-րդ կետը խմբ. 16.11.17 N 1449-Ն)**
9. Հանձնաժողովի նախագահը հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը:
  10. Հանձնաժողովի անդամը հանձնաժողովում բողոքարկվող գործի բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի ներկայացուցչից հանձնաժողովի քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) միջոցով կարող է պահանջել դիմում-բողոքին առնչվող լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որոնք ստանալուց հետո քարտուղարության միջոցով ոչ ուշ, քան դրանք ստանալուն հաջորդող օրը, ուղարկվում են հանձնաժողովի բոլոր անդամներին:
  11. Բողոքարկվող գործի բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի

ներկայացուցիչը դիմում-բողոքին առնչվող լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր պահանջելու վերաբերյալ քարտուղարության հարցումը ստանալուց հետո լրացուցիչ տեղեկատվությունը և փաստաթղթերը քարտուղարություն է ներկայացնում հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան հարցումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:

12. Քարտուղարության գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

13. Քարտուղարությունը՝

1) ընդունում է հանձնաժողովին ներկայացված դիմում-բողոքները.

2) նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգը.

3) կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները.

4) հանձնաժողովի անդամի կողմից բողոքարկվող գործի բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի ներկայացուցչից լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր պահանջելու դեպքում համապատասխան հարցում է ուղարկում բողոքարկվող գործի բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմին.

5) բողոքարկվող գործի բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնից լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր ստանալու դեպքում դրանք ոչ ուշ, քան ստանալուն հաջորդող օրը, ուղարկում է հանձնաժողովի բոլոր անդամներին.

6) ծանուցում է դիմում-բողոք ներկայացրած անձին և հանձնաժողովի անդամներին համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին.

7) քննարկման է ներկայացնում հանձնաժողովի գործունեությանը վերաբերող ընթացիկ հարցերը.

8) արձանագրում է հանձնաժողովի նիստերը, կազմում և հանձնաժողովի անդամների համաձայնեցմանն է ներկայացնում հանձնաժողովի որոշումների նախագծերը.

9) դիմում-բողոք ներկայացնողին է ուղարկում հանձնաժողովի ընդունած որոշումը.

10) կազմում է դիմում-բողոքի գործը, վարում հանձնաժողովի գործերի հաշվառման և ընդունված որոշումների գրանցամատյանները:

14. Բողոքարկման հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել դիմում-բողոք ներկայացրած անձը և (կամ) նրա լիազորած անձը:

15. Բողոքարկման հանձնաժողովին դիմում-բողոք ներկայացրած անձը համապատասխան նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ծանուցվում է նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

16. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի որոշմամբ նիստին կարող է հրավիրվել նաև բողոքարկվող գործի բնագավառի անկախ մասնագետ:

17. Բողոքարկման հանձնաժողովի որոշումներն իրավագոր են, եթե այդ որոշումների կայացմանը մասնակցել է բողոքարկման հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան 5 անդամ:

18. Որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամները քվեարկում են կողմ կամ դեմ: Չայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

19. Եթե հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամը չի քվեարկում, ապա համարվում է հանձնաժողովի որոշման ընդունմանը դեմ քվեարկած:

20. Հանձնաժողովը դիմում-բողոքը քննության է առնում և դրա վերաբերյալ որոշում ընդունում դրա մուտքագրվելուն հաջորդող 30 օրվա ընթացքում:

21. Հանձնաժողովը կարող է ներկայացնել տեսչական մարմինների մասին օրենսդրության (այդ թվում՝ հարկային և մաքսային օրենսդրության), ինչպես նաև տեսչական մարմինների օրենսդրությունը կարգավորող այլ իրավական ակտերի դրույթների կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:

22. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ նշված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 օրով, որի մասին դիմումատուն իրազեկվում է երկարաձգման վերաբերյալ որոշումն ընդունելու օրը:

23. Հանձնաժողովի կողմից որոշումն ընդունվելուց հետո եռօրյա ժամկետում այն սահմանված կարգով ուղարկվում է դիմում-բողոքը ներկայացնողին:

24. Հանձնաժողովի որոշումները, դրանց ընդունմանը հաջորդող տասն օրվա ընթացքում, հրապարակվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

25. Հանձնաժողովի որոշումների լուսապատճենները էլեկտրոնային և թղթային եղանակով պահվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում:

26. Հանձնաժողովի որոշումների՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում պահպանման և արխիվացման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:

*(հավելվածը խմբ. 16.11.17 N 1449-Ն)*

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

**Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
մարտի 19-ի N 311-Ն որոշման**

**Կ Ա Ր Գ**

**ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամների առաջադրման հետ կապված հարաբերությունները:
2. Հանձնաժողովը բաղկացած է նախագահից և ինն անդամից: Հանձնաժողովի մշտական անդամներն են Հայաստանի Հանրապետության կառավարության տնտեսական, արդարադատության և ֆինանսների բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները:
3. Հանձնաժողովի կազմում, սույն կարգի 2-րդ կետում նշված մշտական անդամներից բացի, ռոտացիոն կարգով ընդգրկվում են նաև՝
  - 1) բողոքարկվող գործի բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի ներկայացուցիչը.
  - 2) համապատասխան բնագավառի հասարակական կազմակերպությունների երեք ներկայացուցիչ, որոնցից՝  
ա. մեկ ներկայացուցիչ՝ սպառողների շահերը ներկայացնող,  
բ. երկու ներկայացուցիչ՝ համապատասխան բնագավառում գործունեություն իրականացնող գործարար միավորումներից.
  - 3) համապատասխան բնագավառների գիտական կազմակերպությունների երկու ներկայացուցիչ, որոնք չեն կարող լինել լիազոր մարմնի կամ համապատասխան բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի ենթակայությամբ գործող մարմնի կամ կազմակերպության աշխատակից:
4. Սույն կարգի 3-րդ կետում նշված անդամները հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ՝ ռոտացիոն կարգով, եթե քննվում է այդ ոլորտին առնչվող գործ:
5. Այն դեպքում, երբ բողոք է ներկայացվել տեսչական մարմնի դեմ, որի լիազոր մարմնի ներկայացուցիչը հանձնաժողովի մշտական անդամ է, հանձնաժողովի նախագահը փոխարինում է վերջինիս պետական կառավարման այլ մարմնի ներկայացուցչով:
6. Պետական կառավարման մարմինների ներկայացուցիչ հանդիսացող հանձնաժողովի անդամները հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ըստ համապատասխան պետական կառավարման մարմնի կողմից հանձնաժողովի քարտուղարություն ներկայացված թեկնածության:
7. Սույն կարգի 6-րդ կետով նախատեսված պետական կառավարման մարմինը, ըստ հանձնաժողովներում բողոքարկվող գործի բնագավառի, կարող է ներկայացնել մեկից ավելի թեկնածություններ:
8. Հանձնաժողովի կազմում բողոքարկվող գործի բնագավառի քաղաքականությունը մշակող պետական կառավարման մարմնի ներկայացուցիչը ընդգրկվում է հանձնաժողովի քարտուղարության կողմից բողոքի մասին ծանուցվելու դեպքում:
9. Պետական կառավարման մարմինը սույն կարգի 7-րդ կետով նախատեսված դեպքում հանձնաժողովի անդամի թեկնածություն ներկայացնում է ծանուցումը ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում:
10. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված համապատասխան բնագավառի հասարակական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից հանձնաժողովի անդամ ընդգրկվելու նպատակով հանձնաժողովի քարտուղարությունը ՁԼՄ-ներով և ինտերնետային կայքում հրապարակում է հայտարարություն:
11. Հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով համապատասխան բնագավառի հասարակական կազմակերպությունները կամ գիտական կազմակերպությունները կարող են դիմում ներկայացնել հանձնաժողովի քարտուղարություն:
12. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ներկայացուցիչներ 15-ից ոչ պակաս շահառուների շահեր

ներկայացնող այն հասարակական կամ այն գիտական կազմակերպություններից, որոնք՝

1) ոչ պակաս, քան 5 տարի գրանցված են և փաստացի գործունեություն են իրականացնում Հայաստանի Հանրապետությունում.

2) քարտուղարություն են ներկայացրել իրենց կողմից հետապնդվող նպատակների և խնդիրների մանրամասն նկարագրություն ու դրանց լուծման ուղղությամբ իրականացված կամ իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

13. Հանձնաժողովի քարտուղարությունը հասարակական կամ գիտական կազմակերպություններից կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ օրենքով չարգելված այլ տեղեկատվություն կազմակերպությունների կողմից իրականացված կամ իրականացվող ծրագրերի վերաբերյալ:

14. Հանձնաժողովի քարտուղարությունը հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով դիմում ներկայացրած հասարակական կամ գիտական կազմակերպությունների ցանկը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հանձնաժողովի նախագահ նշանակված անձին:

15. Հանձնաժողովի կազմում հասարակական կամ գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներին ընդգրկելու հարցը որոշում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ առաջնորդվելով սույն կարգի 12-րդ կետով:

16. Հանձնաժողովի անդամ հանդիսացող հասարակական կամ գիտական կազմակերպությունների ներկայացուցչի անդամությունը դադարեցվում է, եթե նա՝

1) գրավոր դիմում է ներկայացրել հանձնաժողովի քարտուղարություն.

2) երեք անգամ անընդմեջ անհարգելի բացակայել է հանձնաժողովի նիստերից.

3) նա այլևս տվյալ հասարակական կամ գիտական կազմակերպության անդամ չէ.

4) առկա է օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռ՝ բողոքարկվող գործի քննազավատում կատարված իրավախախտման համար, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

5) առկա է օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, որով որպես պատիժ սահմանվել է ազատազրկում, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

6) նա մահացել է.

7) տվյալ հասարակական կամ գիտական կազմակերպությունը վերակազմակերպվել կամ լուծարվել է:

17. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակելուց հետո դիմում չներկայացնելու դեպքում հանձնաժողովի քարտուղարությունը հրավեր է ներկայացնում հասարակական կամ գիտական կազմակերպություններին սույն կարգի 14-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ներկայացուցչի թեկնածություն տրամադրելու համար:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

**Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
մարտի 19-ի N 311-Ն որոշման**

26

**ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ**

**ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ**

(այն վարչական մարմնի անվանումը, որի դեմ ներկայացվում է դիմում-բողոքը)

(ղիմում-բողոք բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից ղիմում-բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

**ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ**

---

---

---

(ղիմում-բողոքի առարկան)

---

---

(ղիմում-բողոք բերողի պահանջը)

---

---

(ղիմում-բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը)

---

---

(ղիմում-բողոք կազմելու տարեթիվը, ամիսը և ամսաթիվը)

(ղիմում-բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից ղիմում-բողոք բերող անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը (առկայության դեպքում))

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

**Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
մարտի 19-ի N 311-Ն որոշման**

26

**ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ  
ՄԱՍԻՆ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ**

**ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

---

---

---

(ղիմում-բողոք բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից ղիմում-բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն)

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

(ղինում-բողոքի առարկան)

\_\_\_\_\_

(ղինում-բողոք բերողի պահանջը)

\_\_\_\_\_

(բողոքարկման հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամանակը)

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

\_\_\_\_\_  
(պատասխանատու անձի  
ստորագրությունը)

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**